Թոն գուկա վերևից

Թոն գուկա վերևից,
Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Անուշ յարիս եդևից:

Տընգըլ, մընգըլ կքելես,
Թոն գուկա վերևից,
Հաստատ ընձի կսիրես,
Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Անուշ յարիս եդևից:

Հենց օր ծագի արևը,
Թոն գուկա վերևից,
Քեզի ղրկեմ բարևը,
Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Անուշ յարիս եդևից:

Արև ելավ էն սարեն,
Թոն գուկա վերևից,
Կաքավ կանչեց էն քարեն,
Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Անուշ յարիս եդևից:

Թոն գուկա վերևից - բնագիր

Թոն գուկա վերևից,

Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Լոպազ (սիրած) յարիս եդևից:

Տընգըլ, մընգըլ կքելես,
Թոն գուկա վերևից,
Հաստատ ընձի կսիրես,
Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Լոպազ յարիս եդևից:

Յար չունեի բոնեցի,
    Թոն գուկա վերևից,
ճար չունեի սիրեցի,
    Կաթեգը տերևից,
Ֆայտոն նստիմ էրտամ հասնիմ
Լոպազ յարիս եդևից: